

Արձանագրություն №5/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. մարտի 11-ին տեղի ունեցած թիվ 5 առցանց նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 79-ը (յոթանասունինը):

Նիստը նախագահում էր ռեկտորի պարտականությունները ժամանակավոր կատարող Ռաֆայել Բարխուդարյանը:

Նիստի քարտուղարն էր Լ. Ս. Հովսեփյանը:

Նիստը նախագահող Ռ. Բարխուդարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց նիստի օրակարգում ներառել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարություն. մաս 1» աշխատանքը հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին հարցը՝ քվեարկության դնելով նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ գիտքարտուղար Լ. Հովսեփյան):
2. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
3. 2021-2022 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերի հաստատում (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյան):
4. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյան):
5. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման հայտերի երաշխավորություն (զեկ.՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):
6. Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2019-2020 ուստարի) մասին (զեկ.՝ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղասյան):

Ընթացիկ հարցեր

7.1. Գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական հրապարակումների հիմնական չափանիշներ սահմանելու մասին:

7.2. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարություն. մաս 1» աշխատանքը (հեղ.՝ ի.գ.դ., պրոֆեսոր Վ. Հովհաննիսյան, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Հ. Բեդկյան, ի.գ.թ., ասիստենտ Ա. Ղարսյան, ի.գ.թ., ասիստենտ Տ. Խաչիկյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը՝ առաջարկված լրացմամբ:

1.Լսեցին. ԵՊՀ գիտական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցի հաստատման մասին հարցը Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց, որ ժամանակացույցում ընդգրկված է 16 հարց և նախատեսվում է թվով 4 հերթական նիստերի անցկացում:

Որոշեցին – Հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցը:

2.Լսեցին. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:

Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց պրոֆեսորի և դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ՝ նշելով, որ պրոֆեսորի 1 հավակնորդի վերաբերյալ հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն, իսկ դոցենտի գիտական կոչման 8 հավակնորդներից 2-ի վերաբերյալ հանձնաժողովը տվել է բացասական եզրակացություն՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» պահանջներին: Բացասական եզրակացությունը կապված էր, մասնավորապես, ուսումնամեթոդական աշխատանքների անհամապատասխանության հետ:

Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդն էր.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Աշոտ Մեյրանի Ալեքսանյան	Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ

Դոցենտի գիտական կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Պետրոսյան Սաթենիկ Ղուկասի	Ֆարմաքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ

2.	Մանուկյան Վահան Միերի	ռեզիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի ասիստենտ
3.	Սայադյան Հասմիկ Ռաֆիկի	սերվիսի ամբիոնի ասիստենտ
4.	Գրիգորյան Նաթելլա Սերոժի	Ի/մ հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ
5.	Ստեփանյան Միեր Օգսենի	Ի/մ կիրառական արվեստի և դիզայնի ամբիոնի ասիստենտ
6.	Տոնոյան Արտյոմ Արտաշեսի	իրանագիտության ամբիոնի ասիստենտ

Կազմակերպվեց առցանց փակ քվեարկություն: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց առցանց, փակ գաղտնի քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Աշոտ Սեյրանի Ալեքսանյան	69	0

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Պետրոսյան Սաթենիկ Ղուկասի	70	0
2.	Մանուկյան Վահան Միերի	69	1
3.	Սայադյան Հասմիկ Ռաֆիկի	69	1
4.	Գրիգորյան Նաթելլա Սերոժի	69	1
5.	Ստեփանյան Միեր Օգսենի	68	2
6.	Տոնոյան Արտյոմ Արտաշեսի	70	0

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումներ շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

3.Լսեցին. – 2021-2022 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերի հաստատման մասին: Նիստի նախագահող Ռ. Բարխուդարյանը ներկայացրեց, որ նախորդ ուսումնական տարվա համար արված փոփոխություններից հետո 2021-2022 ուստարվա

ԵՊՀ ուսման վարձավճարների փոփոխություն չի կատարվել: Միակ խնդիրը վերաբերում է սոցիոլոգիայի ֆակուլտետի «հասարակայնության հետ կապեր» բակալավրի ծրագրի վարձավճարի չափին, ինչը սահմանվել է 780 հզ. դրամ՝ մագիստրոսական համանուն ծրագրի վարձավճարին համարժեք: Քանի որ ծրագիրն իրականացվելու է առաջին անգամ, այդ ծրագրի վարձավճարի չափը որոշելու անհրաժեշտություն է առաջացել: Ռ. Բարխուդարյանը նշեց նաև, որ հաստատման է ներկայացվում նաև օտարերկրյա սովորողների ուսման վարձավճարների չափերը, որոնցում ևս փոփոխություն չի կատարվում, և դրանք սահմանվում են ԱՊՀ և այլ երկրների քաղաքացիների համար ըստ նախատեսված տոկոսային չափաբաժինների: Ռ. Բարխուդարյանը ներկայացրեց, որ օտարերկրյա քաղաքացիների ուսման վարձավճարների վերաբերյալ որոշումներում 1 կրեդիտի արժեքը սահմանված է ընդհանուր հոսքերում սովորող օտարերկրյա քաղաքացիների համար, ապա օտարերկրյա քաղաքացիների՝ անհատական ծրագրով ընդունելության, ինչպես նաև ժամավճարների վճարման հարցերում առաջանում են խնդիրներ 1 կրեդիտի արժեքի և ժամավճարների համար սահմանված գումարների անհամաչափության պատճառով: Այդ իսկ պատճառով առաջարկվում է անհատական ծրագրով հայերեն կամ օտար լեզվով առարկաների 1 կրեդիտի արժեքը սահմանել 40 հազար ՀՀ դրամ:

Որոշեցին. – Հաստատել 2021-2022 ուստարվա ԵՊՀ ուսման վարձավճարների չափերը, այդ թվում՝ օտարերկրյա ուսանողների համար: Անհատական ծրագրով հայերեն կամ օտար լեզվով առարկաների 1 կրեդիտի արժեքը սահմանել 40 հազար ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվեց 62 կողմ, 1 դեմ, 8 ձեռնպահ ձայներով:

4.Լսեցին.– 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը նշեց, որ թվով 54 անվանական կրթաթոշակի համար ներկայացված է 58 թեկնածու: Նա նաև նշեց, որ Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը դիմել է ԵՊՀ ռեկտորին՝ «Նազելի Չարչյանի անվան» ևս մեկ կրթաթոշակ քիմիայի ֆակուլտետին հատկացնելու հարցով, ուստի առաջարկեց հաստատվելիք ցուցակում ընդգրկել նաև քիմիայի ֆակուլտետի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող Տիգրան Հայկի Եզանյանին՝ որպես «Նազելի Չարչյանի անվան» կրթաթոշակի թեկնածու:

Որոշեցին. – Հաստատել 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը՝ առաջարկված լրացմամբ:

Որոշումն ընդունվեց 71 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայներով:

5.Լսեցին. – ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման հայտերի երաշխավորության մասին: Նիստի նախագահող Ռ. Բարխուդարյանը ներկայացրեց, որ ԳՊԿ-ի պահանջով բազային ծրագրերը խոշորացվել

են, օպտիմալ հայտեր են ներկայացվել և գումարային առումով հատկացումների համամասնությունը գրեթե պահպանվել է:

Որոշեցին. – Երաշխավորել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման 2022թ. հայտերը:

6. Լսեցին. – Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2019-2020 ուստարի) մասին: Հետբուհական և լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Աղասյանը հիշեցրեց, որ 2011թ-ից ԵՊՀ-ում գործում է կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման ծրագիրը: 2011-2016թթ. եղել է առաջին փուլը, իսկ 2016-2021թթ.՝ ընթանում է երկրորդ փուլը, որի արդյունքների ամփոփումը նախատեսվում է սեպտեմբերին: Ըստ նրա՝ համավարակով և պատերազմական դրությամբ պայմանավորված ծրագրի արդյունավետությունը նվազել է, դասընթացներն իրականացվել են հեռավար, կատարվել են այդ ոլորտում դասախոսների նախապատրաստման և վերապատրաստման ծրագրեր: 2011-2016թթ. ծրագրով մեծ աշխատանք է կատարվել դասախոսների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, սակայն վերջին շրջանում դասախոսների մոտիվացիան և ցանկությունները նվազել են: Ըստ նրա՝ դասընթացներում մասնակցող դասախոսների թիվը այդ պահի դրությամբ կազմել է 100 մասնակից, և քչերն են ցանկանում աշխատել իրենց իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ: Մասնագիտության արդի հիմնախնդիրները միակ պարտադիր մասնագիտական դասընթացն էր, սակայն եթե նախկինում 1 անձ էր կարողում այդ դասընթացը, ապա ներկայում արդեն 2-3 հոգի պետք է կազմեին և կարդային, որպեսզի տվյալ մասնագիտության բոլոր հիմնախնդիրները հայտնվեին դասընթացի հիմքում: Զգալի աշխատանք էր կատարվել այդ դասախոսների մոտիվացիան բարձրացնելու ուղղությամբ, և մոտ 10 մասնագիտությունների գծով արդեն այդ խնդիրը լուծվել է: Ժ. Աղասյանը նշեց, որ 2011-2016թթ. առաջին փուլի արդյունքների ամփոփման ժամանակ ակնհայտ դարձան ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրման հետ կապված խնդիրները, սակայն միջազգային փորձի ուսումնասիրման ու մշակումների արդյունքում հնարավոր դարձավ էականորեն բարելավել վիճակը, և շարունակական աշխատանքի արդյունքում հնարավոր կլինի լավ արդյունքներ գրանցել: Պրոռեկտոր Է. Ասրիյանը հավելեց, որ 2021թ. ծրագրի երկրորդ փուլը ամփոփվելու է, և արդեն նոր ծրագիր կազմելու աշխատանքները մեկնարկել են: Նոր ծրագրի մշակման հարցում նախատեսվում է հետազոտության անցկացում՝ դուրս բերելու թերությունները, բացթողումները, առավելությունները, և դրանց հիման վրա կմշակվի վերապատրաստման նոր ծրագիրը:

Որոշեցին. – ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի (2019-2020 ուստարի) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

7.Լսեցին.- Գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական հրապարակումների հիմնական չափանիշներ սահմանելու մասին հարցը: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց, որ տարբեր գործընթացների՝ մասնավորապես գիտական կոչումների շնորհման, տարբեր պաշտոնների տեղակալման մրցույթների համար պահանջվում են համապատասխան թվով գիտական, ուսումնամեթոդական հրապարակումներ, աշխատանքներ, որոնց սահմանումները և չափորոշիչները հստակ չկան, ինչը պարբերաբար որոշ խնդիրներ է առաջացնում: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն է առաջացել հակիրճ, սակայն հիմնական չափանիշներով սահմանել գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների համար պարտադիր բաղադրիչները: Այդ խնդիրը լուծելու և նախնական չափորոշիչներ սահմանելու նպատակով ձևավորված է աշխատանքային խումբ, որը կատարել է դեռևս խիստ նախնական մշակումներ, որոնք հնարավորություն կտան ուղղորդելու պրոֆեսորադասախոսական կազմին: Լ. Հովսեփյանը նկատեց, որ մշակված նախագծի վերջնական տեսքի բերվելուց հետո կուղարկվի գիտխորհրդի անդամներին և կներկայացվի հաստատման: Հրատարակչության տնօրեն Կ. Գրիգորյանը հարցի առնչությամբ նկատեց, որ այդ խնդրի կանոնակարգման իմաստ չի տեսնում, քանի որ գիտական և ուսումնական հրատարակումների բնույթը բոլորին հայտնի է և նման կարգավորումները հրատարակչություններն իրենք են սահմանում: Բացի այդ, ըստ նրա, նման հարցերը քննարկվում են համալսարանական ամբիոններում, մեթոդական խորհուրդներում և հենց այդ օղակներում են կարգավորվում նման խնդիրները՝ նպատակահարմար համարելով ոչ թե գիտական խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի, այլ ուղեցույցի մշակումն ու հրապարակումը: Նիստը նախագահող Ռ. Բարխուդարյանն ի պատասխան նկատեց, որ հրապարակումների հիմնական, ընդհանրական նկարագրությունը, սահմանումներն ու չափանիշներն անհրաժեշտ են կամայական մեկնաբանություններից խուսափելու համար, գուցե նաև ուղեցույցի ձևով: Ի հավելումն վերոնշյալի՝ Լ. Հովսեփյանը նշեց, որ ուղեցույցը խնդիրը մեծ հաշվով չի լուծի, քանի որ այն իմպերատիվ բնույթ չի ունենա և վիճելի հարցերում հնարավոր չի լինի հղում կատարել դրան: Հաճախ մրցութային հանձնաժողովի նիստերում դիտարկվում և քննարկվում են ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնք թեև տպագրված են լինում գիտական երաշխավորությամբ պարբերականներում, սակայն բովանդակային առումով որևէ առնչություն չեն ունենում ուսումնամեթոդական աշխատանքների հետ, ձևական առումով ներկայացվում է որպես ուսումնամեթոդական աշխատանք, սակայն հարց է առաջանում բովանդակային մասի հետ:

Որոշեցին.- Գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական հրապարակումների հիմնական չափանիշներ սահմանելու մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

8.Լսեցին.- «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարություն. մաս 1» աշխատանքը (հեղ.՝ ի.գ.դ., պրոֆեսոր Վ. Հովհաննիսյան, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Հ. Բեդևյան, ի.գ.թ., ասիստենտ Ա. Ղարսյան, ի.գ.թ., ասիստենտ Տ. Խաչիկյան) հրատարակության երաշխավորելու և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին հարցը: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը նշեց, որ ներկայացվող դասագիրքն առաջինն է իր տեսակի մեջ, քանի որ վարչական դատավարություն առարկան նոր է ներդրվել իրավագիտության ֆակուլտետում: Դասագիրքը պատրաստվել է գերմանական GIZ կազմակերպության և ֆակուլտետի համագործակցության, հայ և գերմանացի իրավագետների փորձագիտական, գիտագործնական քննարկումների ու խորհրդատվության արդյունքում:

Որոշեցին.- «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարություն. մաս 1» աշխատանքը (հեղ.՝ ի.գ.դ., պրոֆեսոր Վ. Հովհաննիսյան, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի նախագահ Հ. Բեդևյան, ի.գ.թ., ասիստենտ Ա. Ղարսյան, ի.գ.թ., ասիստենտ Տ. Խաչիկյան) երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

Գիտական խորհրդի նիստը նախագահող՝

Ռ. Հ. Բարխուդարյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

16.03.2021թ.